ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2019 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխություններ,ը՝

1) 15-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետում «նռան» բառից հետո լրացնել «և ընկուզենու» բառերը,

բ. 7-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ ենթակետ.

«8) Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Վերին ենթաշրջանում պտղատու այգիների հիմնադրման նպատակով տնկիների ձեռքբերում և անհատույց տրամադրում։».

2) 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***24. Նռան և ընկուզենու տնկիների ձեռքբերում և տրամադրում.***

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված տարածքներում նռան այգի հիմնադրելու դեպքում նվազագույնը 1 հեկտար, իսկ ընկուզենու այգի հիմնադրելու դեպքում՝ նվազագույնը 0,5 հեկտար, մակերեսով ամբողջական հողատարածքում այգի հիմնադրելու համար հողօգտագործողներին անհատույց տրամադրվում են նռան տնկիներ՝ 1 հեկտարի հաշվարկով 625 հատ տնկի և ընկուզենու տնկիներ՝ 1 հեկտարի հաշվարկով 278 հատ տնկի.

2) նռան տնկիները ձեռք են բերվում նախարարության կողմից և վարչակազմի ղեկավարի ներկայացրած տեղեկության հիման վրա հանձնվում են վարչակազմին՝ հողօգտագործողներին անհատույց տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով.

3) ընկուզենու տնկիները ձեռք են բերվում հիմնադրամի միջոցներով և արժեքի 50 տոկոսի սուբսիդավորմամբ տրամադրվում հողօգտագործողներին՝ սույն կետի 6-րդ ենթակետում նշված՝ նախարարության ներկայացրած համապատասխան տեղեկության հիման վրա.

4) Ծրագրից օգտվելու (նռան տնկիների անհատույց, իսկ ընկուզենու տնկիների՝ արժեքի 50 տոկոսի սուբսիդավորմամբ տրամադրում) պարտադիր պայման է հանդիսանում նռան այգի հիմնադրելու դեպքում նվազագույնը 1 հեկտար, իսկ ընկուզենու այգի հիմնադրելու դեպքում՝ նվազագույնը 0,5 հեկտար մակերեսով հողատարածքի համար այգի հիմնադրելու նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված լինելը (բացառությամբ ընկուզենու այգի հիմնադրելու դեպքում բարձրադիր՝ 900 մետր և ավելի բարձր գոտիների), համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը հողատարածքը տունկին պատրաստ (հերկված, տեղաձևած և փոսերը փորած) լինելու մասին.

5) սույն կետի 4-րդ ենթակետում նշված տեղեկանքները ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

6) նախարարությունն ընդհանրացնում և արժեքի 50 տոկոսի սուբսիդավորմամբ ընկուզենու տնկիներ ձեռքբերելու համար դիմած հողօգտագործողների հայտերն ու համապատասխան փաստաթղթերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է հիմնադրամ.

7) ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված տնկիների ոչ նպատակային օգտագործման դեպքում տրամադրված տնկիների արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե.

8) տրամադրված տնկիների նպատակային օգտագործումը ստուգելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

9) շրջանների վարչակազմի ղեկավարները տնկիների բաշխման գործընթացն ավարտելուց հետո նախարարություն են ներկայացնում հաշվետվություն կատարած աշխատանքների մասին:».

3) 27-րդ կետից հետո լրացնել 27.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«***27.1 Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի բարձրադիր գոտում պտղատու այգիների հիմնադրման նպատակով տնկիների ձեռքբերում և անհատույց տրամադրում.***

1) Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի բարձրադիր գոտում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված տարածքներում նվազագույնը 0,5 հեկտար մակերեսով ամբողջական հողատարածքում այգի հիմնադրելու համար հողօգտագործողներին անհատույց տրամադրվում են խնձորենու, տանձենու, արևելյան խուրմայի, կեռասենու, սև սալորենու, սերկևիլենու, տխլենու, զկեռենու և ընկուզենու տնկիներ՝ համաձայն N 3 աղյուսակի.

2) տնկիները ձեռք են բերվում նախարարության կողմից (բացառությամբ ընկուզենու տնկիների) և Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի ներկայացրած տեղեկության հիման վրա հանձնվում են վարչակազմին՝ հողօգտագործողներին անհատույց տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով.

3) ընկուզենու տնկիները ձեռք են բերվում հիմնադրամի միջոցներով և անհատույց տրամադրվում հողօգտագործողներին՝ սույն կետի 6-րդ ենթակետում նշված՝ նախարարության ներկայացրած համապատասխան տեղեկության հիման վրա.

4) Ծրագրից օգտվելու (տնկիների անհատույց տրամադրում) պարտադիր պայման է հանդիսանում 900 մետր և ավելի բարձր գոտիներում նվազագույնը 0,5 հեկտար մակերեսով հողատարածքի համար այգի հիմնադրելու նպատակով հայտի ներկայացումը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը հողատարածքը տունկին պատրաստ (հերկված, տեղաձևած և փոսերը փորած) լինելու մասին.

5) սույն կետի 4-րդ ենթակետում նշված տեղեկանքները ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

6) նախարարությունն ընդհանրացնում և ընկուզենու տնկիներ ձեռքբերելու համար դիմած հողօգտագործողների հայտերն ու համապատասխան փաստաթղթերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է հիմնադրամ.

7) ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված տնկիների ոչ նպատակային օգտագործման դեպքում տրամադրված տնկիների արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե.

8) տրամադրված տնկիների նպատակային օգտագործումն ստուգելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

9) Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարը տնկիների բաշխման գործընթացն ավարտելուց հետո նախարարություն է ներկայացնում հաշվետվություն կատարած աշխատանքների մասին:».

4) N 2 աղյուսակի «Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2019 թվականի համար» աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

5) հավելվածում լրացնել N 3 աղյուսակ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
4.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2019 թ.

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

«***Աղյուսակ N 2***

Բուսաբուծության զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ներդրումները 2019 թվականի համար

Հ/հ	Մշակաբույսի կամ միջոցառման անվանումը	Նախատես-վում է մշակել (հա)	Ցանքսի կամ տնկման նորմա (կգ, հատ/հա)	Համա-խառն բերք (տ)	Անտոկոս փոխառության և անհատույց դրամական միջոցներ (ՀՀ դրամ)	Ապրանքա նյութի պահանջը (կգ, հատ)	Ապրանքանյութի արժեքը (ՀՀ դրամ)	Անհատույց դրամական միջոցների կամ ապրանքա-նյութերի տրամադրում (ՀՀ դրամ)	ՆՆՓ փորձաքննություն (ՀՀ դրամ)	Տեխ. հսկողություն (ՀՀ դրամ)	Լրավճար մթերված բերքի դիմաց (ՀՀ դրամ)	Ինոկուլյանտի քանակը (լիտր)	Պարար-տանյութի քանակը (կգ)	որից		Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)	որից		
														ֆոսֆոր	կալիում		ԱՀ 2019 թվականի պետական բյուջե		ԼՂՀ ԳԳԱՀ-ի միջոցներով (ՀՀ դրամ)
																	Բուսաբուծության համալիր զարգացման ծրագիր (ՀՀ դրամ)	Բազմամյա կերային խոտաբույսերի մշակության (կորնգան, առվույտ) ծրագիր	
1	Կաթիլային համակարգ	391			587000000				1700000	11300000						600000000	600000000		
2	Եգիպտացորեն (հատիկ)	4000	16			64000	254400000									254400000	80020000		174380000
4	Հնդկացորեն	1937.5	80			155000	109275000									109275000			109275000
5	Արևածաղիկ	2800	5			14000	55860000						280000	140000	140000	55860000	55860000		
6	Սոյա	550	60			33000	24585000					66	55000	27500	27500	24585000			24585000
7	Կտավատ	6700	50			335000	247900000									247900000	247900000		
9	Սորգո	50	12			600	480000									480000	480000		
11	Սիսեռ	290	100			29000	32190000									32190000			32190000
12	Ոսպ	100	120			12000	8640000									8640000	8640000		
13	Ոլոռ	260	200			52000	22100000									22100000	22100000		
14	Հլածուկ	200	6			1200	1044000						20000	10000	10000	1044000			1044000
15	Կորնգան	1000	100			100000	58500000									58500000		52500000	6000000
16	Առվույտ	950	20			19000	47500000									47500000		47500000	
17	Ծխախոտ			2500							25000000					25000000	25000000		
18	Բանջարեղեն	186						37230000								37230000	37230000		
19	Կարտոֆիլ	51.8						7770000								7770000	7770000		
20	Ջերմոցային տնտեսություն	5						10000000								10000000	10000000		
21	Նոան տնկիներ	960	625				90000000									90000000	90000000		
22	Այլ տնկիներ	50					15000000									15000000	15000000		
ԸՆԴԱՄԵՆԸ		***20481.30***		***2500***	***587000000***		***967474000***	***55000000***	***1700000***	***11300000***	***25000000***	***66***	***355000***			1647474000	1200000000	100000000	347474000

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱՉԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

Աղյուսակ N 3

ԱՀ Ասկերանի շրջանի Վերին ենթաշրջանի համայնքներում պտղատու այգիների հիմնադրման համար տրամադրվող տնկիների քանակները 1 հեկտարի համար

Հ/հ	***Պտղատեսակը***	***Տնկման սխեմա***	***Մեկ հեկտարի համար պահանջվող տնկիների քանակ (հատ)***
1	***Խնձորենի***	***4Х5***	500
2	***Տանձենի***	***5Х5***	400
3	***Արևելյան խուրմա***	***5Х5***	400
4	***Կեռասենի***	***6Х6***	278
5	***Սև սալորենի***	***4Х5***	400
6	***Սերկևիլենի***	***4Х5***	500
7	***Տխլենի***	***4Х5***	500
8	***Զկեռենի***	***4Х5***	500
9	***Ընկուզենի***	***6Х6***	278

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ*** ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում պետական աջակցության նոր միջոցառումներ սահմանելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշմամբ հաստատվել է Բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը, որը նախատեսված է մի քանի տարիների համար: Ծրագրով այգեգործության զարգացման համար նախատեսվում էր հողօգտագործողներին տրամադրել նռան տնկիներ: Նախագծով առաջարկվում է պտղատու այգիներ հիմնադրելու նպատակով Արցախի Հանրապետության բոլոր շրջանների հողօգտագործողներին տրամադրել նաև ընկուզենու տնկիներ՝ արժեքի 50 տոկոսի սուբսիդավորմամբ, ինչպես նաև Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Վերին ենթաշրջանում՝ այլ ծառատեսակներ ևս:

Նպատակը և բնույթը

Սույն որոշման նախագծի հիմնական նպատակն է Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում սահմանել պետական աջակցության նոր միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքը

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կամրագրվեն բուսաբուծության ոլորտում 2019 թվականին իրականացվելիք նոր միջոցառումները, պետական աջակցության ձևերը և չափերը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ »ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն
4. ԱՀ շրջաններ
5. ԼՂՀ ԳԳԱՀ

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն

_____ ***Ա. Բաղալյան***

(ստորագրությունը)